



**Peace  
Corps**  
ARMENIA



ՏԱՐԵԿԱՆ

**2018**

ԶԵԿՈՒՅՑ

**100-ից ավելի ընտանիքներ  
խաղաղության կորպուսի  
կամավորներ են հյուրընկալել  
իրենց տներում**

131 կամավոր ծառայել է  
Հայաստանի տարբեր  
գյուղերի և քաղաքների

- 120 համայնքում
- 70 դպրոցում
- 50 հասարակական կազմակերպությունում

Ավելի քան 1,100 կամավոր է  
ծառայել Հայաստանում  
1992թ.-ից ի վեր

**26 տարվա բարեկամություն  
և համագործակցություն  
հայ ժողովրդի հետ**



**Peace  
Corps**  
ARMENIA

## Տնօրենի ուղերձը

1992թ.-ից ի վեր Խաղաղության կորպուսի կամավորներն աշխատել են հայ ժողովրդի կողքին՝ նպաստելով հայ և ամերիկացի ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամրապնդմանը: Մինչ օրս ավելի քան 1,100 ամերիկացի կամավորներ իրենց կյանքի երկու տարին նվիրաբերել են ապրելու և ծառայելու Հայաստանի տարբեր համայնքներում: Այս տարիների ընթացքում նրանք նպաստել և շարունակում են նպաստել Հայաստանում կրթության, երիտասարդության և հասարակական կազմակերպությունների զարգացմանը:

Մենք հպարտ ենք 2018թ.-ին ունեցած մեր բոլոր ձեռքբերումներով և նվաճումներով, որոնք հնարավոր չէր լինի իրականացնել առանց մեր գործընկերների և Հայաստանի կառավարության օժանդակության: Մենք շնորհակալ ենք, որ հնարավորություն ենք ունեցել ամուր և բովանդակալից հարաբերություններ հաստատել Հայաստանի համայնքների և ընտանիքների հետ, որոնք անցյալ տարի ջերմորեն ընդունել են մեր կամավորներին և համագործակցել մեզ հետ մեր բոլոր համատեղ ձեռնարկներում:

2019թ.-ին և գալիք տարիներին մենք հավատարիմ կմնանք հայ ժողովրդի և Հայաստանի կառավարության հետ աշխատելու մեր պատրաստակամությանը՝ շարունակելով մեր բարեկամությունն ու փոխըմբռնումն էլ ավելի ամրապնդելու նոր հնարավորություններ փնտրել:



Սանի Լ.Լ. Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի տնօրեն

## Մեր կամավորները


- Բոլորը Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ են
- 22-75 տարեկան են
- Խոսում, գրում և կարդում են հայերեն
- Հայաստան են գալիս երկու տարի ժամկետով
- Աշխատում և ապրում են Հայաստանի տարբեր մարզերի գյուղերում և քաղաքներում
- Աշխատում են դպրոցներում, համալսարաններում և հասարակական կազմակերպություններում
- Բոլորը ԱՄՆ-ի տարբեր համալսարանների շրջանավարտներ են
- Կազմակերպում և վարում են տարբեր արտադասարանական խմբակներ և ճամբարներ
- Ապրում են հյուրընկալող հայ ընտանիքների հետ առնվազն վեց ամիս
- Չեն ստանում աշխատավարձ իրենց ծառայության համար



## 2018թ.-ի նշանակալի իրադարձությունները

### Փոխըմբռնման նոր հուշագիր ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ

2018թ.-ին ԱՄՆ Խաղաղության կորպուսը վերակնքեց ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ փոխըմբռնման հուշագիրը, համաձայն որի Խաղաղության կորպուսի «Անգլերեն լեզվի ուսուցում» ծրագիրը կշարունակի իրականացվել Հայաստանում՝ հաջորդ հինգ տարիների ընթացքում: Փոխըմբռնման հուշագիրը կարևորում է երկու երկրների միջև ընկերությունն ու համագործակցությունը՝ նպաստելով ունենալով բարձրացնելու Հայաստանում անգլերենի ուսուցման և իմացության մակարդակը:



### ԱՄՆ Խաղաղության կորպուսի 26-րդ խումբը ժամանեց Հայաստան

2018թ.-ին մենք դիմավորեցինք 42 ամերիկացի կամավորներից բաղկացած մեր 26-րդ խմբին Հայաստանում: Եռամսյա նախապատրաստական դասընթացի ընթացքում նրանք ծանոթացան հայերենին և հայ մշակույթին, ձեռք բերեցին մասնագիտական հմտություններ, որից հետո տեղի ունեցավ կամավորների պաշտոնական երդման արարողությունը՝ ԱՄՆ դեսպան պրն. Ռ. Միլսի գլխավորությամբ: Երդման արարողությունից հետո կամավորները մեկնեցին Հայաստանի տարբեր գյուղեր և քաղաքներ և սկսեցին իրենց ծառայությունը Հայաստանում:



## Մեր Ծրագրերը

Խաղաղության կորպուսի կամավորները Հայաստանում աշխատում են երկու ծրագրի շրջանակներում՝ «Անգլերեն լեզվի ուսուցում» և «Համայնքի և երիտասարդության զարգացում»:

### Անգլերեն լեզվի ուսուցում

ԱՄՆ Խաղաղության կորպուսի Անգլերեն լեզվի ուսուցում ծրագիրն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ: Այս ծրագրի շրջանակներում կամավորները

**Դասավանդում են անգլերեն հայ գործընկեր ուսուցիչների հետ միասին Հայաստանի տարբեր գյուղերի և քաղաքների միջնակարգ և ավագ դպրոցներում, քոլեջներում և այլ կրթական հաստատություններում:**

Կամավորները դասավանդում են տեղի հայ ուսուցիչների հետ՝ օգնելով նրանց մշակել աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ և դասավանդման նոր մոտեցումներ: Նրանք նաև անգլերեն են դասավանդում տարբեր արտադասարանական խմբակների և միջոցառումների միջոցով:

## Համայնքի և երիտասարդության զարգացում

«Համայնքի և երիտասարդության զարգացում» ծրագիրը Խաղաղության կորպուսի իրականացնում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ: Այս ծրագրի շրջանակներում կամավորները

**Աշխատում են տեղական հասարակական կազմակերպությունների հետ՝ նպաստելով համայնքային կազմակերպությունների զարգացմանը, օգնելով երիտասարդների զարգացնել իրենց մասնագիտական հմտությունները և կառուցել ամուր քաղաքացիական հասարակություն:**

Կամավորները նաև իրականացնում են երիտասարդության զարգացման ուղղված տարբեր ծրագրեր՝ ճամբարներ, համայնքի զարգացման ծրագրեր, առողջապահական, բնապահպանական, դրամաշրջանային ծրագրեր, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումներ:



## 2018թ.-ի ձեռքբերումները

- Խաղաղության կորպուսի կամավորները դասավանդել են ավելի քան **6,000 աշակերտի** Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներում
- Խաղաղության կորպուսի կամավորները աշխատել և իրենց փորձով կիսել են **94 անգլերենի հայ ուսուցիչների հետ**
- Խաղաղության կորպուսի կամավորների օգնությամբ մոտ **2800 աշակերտ** բարելավել է անգլերենի իմացության մակարդակը
- Խաղաղության կորպուսի կամավորների օգնությամբ **60 անգլերենի ուսուցիչ** բարելավել է անգլերենի ուսուցման մակարդակը՝ կիրառելով դասավանդման նոր մեթոդներ



## 2018թ.-ի ձեռքբերումները

- Խաղաղության կորպուսի կամավորները կազմակերպել և վարել են աշխատանքային հմտությունների զարգացման ուղղված դասընթացներ ավելի քան **2,000 հայ երիտասարդների** համար
- Ավելի քան **425 երիտասարդ** ձեռք է բերել նոր աշխատանքային հմտություններ տարբեր սեմինարների և կրթական ծրագրերի շնորհիվ
- Ավելի քան **100 հասարակական կազմակերպություն** բարելավել է ծրագրերի նախագծման և կառավարման հմտությունները կամավորների հետ աշխատանքի արդյունքում
- Ավելի քան **4,000 երիտասարդ** մասնակցել է կամավորների նախաձեռնած ճամբարներին, խմբակներին և այլ միջոցառումներին